ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№24/ 3131

Ձեր _____ «18» 12 2014թ.

«Իրազեկ Քաղաքացիների Միավորում»
Խորհրդատվական ՀԿ-ի
ծրագրերի համակարգող
Դ.ԻՈԱՆՆԻՍՅԱՆԻՆ
Հասցե՝ ք.Երևան, Հալաբյան փ. 34, բն.1

Ի պատասխան ՀՀ ոստիկանության պետին հասցեգարված Ձեր 15.12.2014թ. դիմումի.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել ոստիկանություն, իսկ 259-րդ հոդվածով սահմանված է. «...Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումը ապահովելու նպատակով թույլատրվում են անձի վարչական ձերբակալում, անձնական զննում, իրերի զննում և իրերի ու փաստաթղթերի վերցնում»:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8 և 12-րդ հոդվածների հիմա վրա 13.03.1998թ. ընդունված ՀՀ կառավարության թիվ 173 որոշման 2-րդ կետի համաձայն՝ հանձնարարվել է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված գործադիր իշխանության մարմինների ղեկավարներին մեկամսյա ժամկետում իրականացնել գաղտնագրման ենթակա

ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ. (+374 10) 59-65-91, էլ. փոստ legal@police.am

1997թ. դեկտեմբերի 30-ի թիվ 626 ԿԳ որոշմամբ հաստատված հրահանգի պահանջներին համապատասխան:

Ի կատարումն ՀՀ կառավարության 1997թ. դեկտեմբերի 30-ի թիվ 626 ԿԳ որոշման՝ մշակվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության պետի 18.02.2005թ. 1-ՆԳ հրամանը:

Նշված հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում գաղտնիության ռեժիմն ապահովելու վերաբերյալ» հրահանգի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ստորաբաժանումները, կախված գաղտնիության աստիճան ունեցող հատուկ կարևորության, հույժ գաղտնի և գաղտնի աշխատանքների ծավալից և գաղտնի աշխատանքներում անմիջականորեն զբաղված ոստիկանության ծառայողների թվից, բաժանվում են երեք հիմնական օբյեկտների՝ հատուկ կարևոր օբյեկտներ, հատուկ ռեժիմային օբյեկտներ և ռեժիմային օբյեկտներ, իսկ 13-րդ կետի համաձայն՝ ռեժիմային օբյեկտների շարքին են դասվում ոստիկանության բոլոր այն ստորաբաժանումները, որտեղ կատարվում են հույժ գաղտնի և գաղտնի աշխատանքներ:

Նույն հրահանգի 15-րդ մասի 395-րդ, 396-րդ և 398-րդ կետերի համաձայն՝ ոստիկանությունում, որտեղ կատարվում և պահպանվում են հույժ գաղտնի և գաղտնի փաստաթղթեր, սահմանվում է անցագրային և ներօբյեկտային ռեժիմ:

Անցագրային ռեժիմը՝ դա կանոնների համալիր է, որը կանոնակարգում է անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը ոստիկանության ստորաբաժանման տարածք, գաղտնի փաստաթղթերի ներսբերման (հանման), ներմուծման (արտահանման) իրականացման միջոցառումները:

Նշված ռեժիմը նախատեսված է, որպեսզի բացառվեն ոստիկանության ստորաբաժանման տարածք անձնական դիտողական միջոցների, կինո-տեսա և լուսանկարչական սարքավորումների, ռադիոտեխնիկական և այլ ապարատուրա ներս բերելը և օգտագործելը:

Այսինքն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով վարչական ձերբակալման ենթարկված կամ բերված անձը ոստիկանության որևէ ստորաբաժանում մուտք գործելու պահից իրավասու չէ տեսաձայնագրել, ձայնագրել կամ լուսանկարահանել:

Ինչ վերաբերվում է մինչև ոստիկանության ստորաբաժանման տարածք մուտք գործելուց առաջ կատարվող գործողություններին, ապա նշեմ, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Միաժամանակ հավելեմ, որ բերելը կամ վարչական ձերբակալում կատարելը համարվում են հարկադրանքի միջոցներ, որոնց ընթացքում ոստիկանության ծառայողը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ որպես բացառիկ միջոց կարող է գործադրել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր

պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:

Ոստիկանության ծառայողներն անցնում են հատուկ պատրաստություն, որի շրջանակում սովորում են բանակցություններ վարելու և համոզելու հմտություններ՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև պարբերաբար անցնում են ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ:

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ **Մ.ՀԱԿՈԲՅԱՆ**

Կատարող՝ Տ.Ավետիսյան
Հեռ. 010-59-66-89